«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

31 Հոկտեմբերի 2023, N 3 - 1

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿՑԱԳՐՎՈՂ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տարբեր կրթական ծրագրերում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի N 9/9.1.126694-2023 գրության դրույթներով իրենց ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ դիմումներ ներկայացրած, սահմանված կարգով կրթական ծրագրերի ակադեմիական խմբերին կցագրված Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների՝ ձմեռային քննաշրջանում գիտելիքի գնահատման մասին հարցը, արձանագրելով, որ թեպետ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի N 9/9.1.126694-2023 գրության հիման վրա ուսանողները կցագրվում են Լեռնային Ղարաբաղում ուսումնառած կրթական ծրագրի համապատասխան կուրսերում, սակայն Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Լեռնային Ղարաբաղի պետական և մասնավոր համալսարանների կրթական ծրագրերի առարկայական տարբերությունները էական են և դրանք վերահանձնելու համար ուսանողներին անհրաժեշտ է շատ ժամանակ (ներառյալ քննաշրջանը)՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերին կցագրված ուսանողների՝ 2023-2024 ուսումնական տարվա ձմեռային քննաշրջանում ուսումնական պլանով նախատեսված գիտելիքի համակարգչային գնահատման բաղադրիչ պարունակող դասընթացների գիտելիքի գնահատումը փոխարինել բանավոր քննությամբ:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Գրիգորյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. հոկտեմբերի 31
Երևան